ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/16/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 16 մայիսի 2022 թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի և Մարիամ Գալստյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 16-ին քննելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում սխալ և ոչ ամբողջական ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 13-ի N ՎԻՎ 16/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը

ՊԱՐԶԵՑ

Ի.Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ի ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, պարզել է, որ Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը **2021 թվականի մայիսի 19-ին ներկայացված** «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) «Բ.6.

209

Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» ենթաբաժնում տարեսկզբին հայտարարագրել է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ անկանխիկ գումարի առկայության վերաբերյալ տվյալ: Մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս բանկային հաշիվներին 01.01.2020 թվականի դրությամբ առկա է եղել 91,063 (իննսունմեկ հազար վաթսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով հաշվի մնացորդ: Հայտարարագրի՝ Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում, հայտարարագրել է անդամակցություն «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ին (ՀՎՀՀ 02510907)՝ որպես բաժնետեր, Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից 2021 թվականի նոյեմբերի 1-ին ստացված թիվ 25.8/35072-2021 գրության համաձայն՝ Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ Հասմիկ Փափազյանը հանդիսանում է «Փափազյան քույրեր» ՍՊԸ-ի 100%-ի բաժնեմասի բաժնետեր և տնօրեն: Նշված փաստը Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը Հայտարարագրի՝ Դ. «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում, ինչպես նաև, ինչի առնչությամբ 2022 թվականի մայիսի 13-ին հարուցվել է թիվ ՎԻՎ 16/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 13-ին Աստղիկ Խառատյանը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 16/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.3 Աստղիկ Խառատյանի կողմից 2022 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողովին է ներկայացվել աշխատավարձի չափի մասին տեղեկանք:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 16-ին, ինչի կապակցությամբ Աստղիկ Խառատյանը պատշաճ ծանուցվել է:

II. Վարույթի մասնակցի բացատրությունը

Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը գրավոր միջնորդել է նշանակված գործի քննությունն իրականացնել իր բացակայությամբ՝ հիմք ընդունելով 13.05.2022 թվականին

վարչական իրավախախտման արձանագրության կազմման ընթացքում իր բացատրությունները, որով վերջինս հայտնել է, որ ունի անդամակցություն «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ին, ինչի մասին ներկայացրել է իր տարեկան հայտարարագրում, նշել է նաև, որ բանկային հաշվի մնացորդներ ենթաբաժնում տարեսկզբին հայտարարագրված 1,000,000 ՀՀ դրամ անկանխիկ գումարը հանդիսանում է իր կողմից 2019 թվականի դեկտեմբեր ամսին ստացված աշխատավարձ, որի վերաբերյալ ներկայացրել է աշխատավարձի չափի մասին տեղեկանք:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

1.Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/16/22 գործում առկա նյութերը, կատարել Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» ենթաբաժնում տարեսկզբին հայտարարագրվել է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ անկանխիկ գումարի առկայության վերաբերյալ տվյալ: Մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս բանկային հաշիվներին 01.01.2020 թվականի դրությամբ առկա է 91,063 (իննսունմեկ հազար վաթսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով հաշվի մնացորդ, հետևաբար, Հայտարարագրում առկա է սխալ ներկայացված տվյալ:

2. Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը Հայտարարագրի՝ Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում, հայտարարագրել է անդամակցություն «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ին որպես բաժնետեր, մինչդեռ Հայտարարագրի՝ Բ.3. «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ի փայաբաժնի վերաբերյալ տվյալ չի հայտարարագրել, հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

3. Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից 2021 թվականի նոյեմբերի 1-ին ստացված թիվ 25.8/35072-2021 գրության համաձայն՝ Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ Հասմիկ Փափազյանը հանդիսանում է «Փափազյան քույրեր» ՍՊԸ-ի 100%-ի բաժնեմասի բաժնետեր և տնօրեն: Նշված փաստը Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը Հայտարարագրի՝ Դ. «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում, չի հայտարարագրել, հետևաբար, Հայտարարագրում առկա է ոչ ամբողջական ներկայացված տվյալ:

211

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա):

4.3 Օրենքի 40-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն:

4.4 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 4-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են ոչ առևտրային կազմակերպության անվանումը, որին հայտարարատու պաշտոնատար անձն անդամակցում է կամ ներկայացված է դրա կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.5 Օրենքի (մինչև ՀՕ 51-Ն օրենքի 17.02.2021 թվականին ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են հանդիսանում կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն հայտարարատու պաշտոնատար անձը և ***(կամ) նրա ընտանիքի անդամները***, կազմակերպությունում ունեցած մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) քանակը, տոկոսը, ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.11 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանվածը ամբողջական կերպով ներկայացված է նաև

հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուն հնարավորություն ունի ընտրել կոնկրետ գույքի տեսակը, դրա վերաբերյալ այլ տեղեկություններ, շահերի դեպքում՝ կազմակերպության անվանումը, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության չափը և այլ տեղեկություններ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 12-ի N 04-Ն որոշմամբ սահմանվել է հայտարարագրի ներկայացման և հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու կարգը, հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակել այն դեպքերը, երբ հայտարարագրման **ենթակա տվյալը** լրացվել է սխալ ենթաբաժնում (2021 թվականի ապրիլի 9-ի թիվ ՎԻՎ/02/21 և 2021 թվականի մարտի 18-ի թիվ ՎԻՎ/01/21 որոշումներ):

Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարտուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:

Սույն գործով Աստղիկ Խառատյանը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում ***անզգուշությամբ*** ներկայացրել է հետևյալ սխալ և ոչ ամբողջական տվյալները.

1) Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» ենթաբաժնում տարեսկզբին հայտարարագրել է 1,000,000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ անկանխիկ գումարի առկայության վերաբերյալ տվյալ: Մինչդեռ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ վերջինիս բանկային հաշիվներին 01.01.2020 թվականի դրությամբ առկա է եղել 91,063 (իննսունմեկ հազար վաթսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով հաշվի մնացորդ,

2) Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը Հայտարարագրի՝ Դ.4. «Հայտարարատուի անդամակցությունը ոչ առևտրային կազմակերպություններին և ներկայացվածությունը դրանց կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում, հայտարարագրել է անդամակցություն «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ին

, որպես բաժնետեր, մինչդեռ Հայտարարագրի՝ Բ.3. «Արժեթղթեր և այլ

214

ներդրումներ» բաժնում «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ի փայաբաժնի վերաբերյալ տվյալ չի հայտարարագրել,

3) Արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից 2021 թվականի նոյեմբերի 1-ին ստացված թիվ 25.8/35072-2021 գրության համաձայն՝ Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանի հետ համատեղ բնակվող չափահաս անձ Հասմիկ Փափազյանը հանդիսանում է «Փափազյան քույրեր» ՍՊԸ-ի 100%-ի բաժնեմասի բաժնետեր և տնօրեն: Նշված փաստը Աստղիկ Ֆրունզեյի Խառատյանը Հայտարարագրի՝ Դ. «Հայտարարատու պաշտոնատար անձի շահերի հայտարարագիր» բաժնի «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» ենթաբաժնում, ինչպես նաև Դ.2. «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» ենթաբաժնում չի հայտարարագրել:

Հաշվի առնելով վարույթի մասնակցի այն դիրքորոշումը, որ անդամակցությունը «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ին ներկայացվել է իր տարեկան հայտարարագրում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում նշել, որ խախտումը տվյալ դեպքում դրսևորվել է Հայտարարագրի՝ Բ.3. «Արժեթղթեր և այլ ներդրումներ» բաժնում «Երևանի Գալիք համալսարան» ԱԿ-ի փայաբաժնի վերաբերյալ հայտարարագրման ենթակա տվյալներ չներկայացնելու մեջ: Նշված տվյալները Օրենքով սահմանված առանձին հայտարարագրման ենթակա տվյալներ են և չեն վերաբերվում **հայտարարագրման ենթակա տվյալը** սխալ ենթաբաժնում լրացվելուն:

Այսպես, Օրենքի՝ 40-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման պահանջն է, որ **արժեթղթի և (կամ) այլ ներդրման դեպքում տարեկան հայտարարագրում պարտադիր կերպով ներառվեն տվյալ տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ** արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը՝ նշելով արժեթղթի տեսակը, **ձեռք բերելու օրը, ամիսը, տարին, եղանակը, արժեքը (գինը), արժույթը, գործարքի մյուս կողմի** անվանումը կամ անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն: Նշված տվյալները բովանդակային առումով չեն ներառվում շահերի հայտարարագրի կառուցվածքում, հետևաբար նաև ներկայացված չեն Հայտարարագրում:

Նույնը վերաբերում է նաև Հայտարարագրում չներկայացված՝ Օրենքի 42-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումներին առ այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամի վերաբերյալ հայտարարատու պաշտոնատար անձի «Շահերի հայտարարագիր» բաժնում պահանջվող տեղեկատվությունը ներառելը ***օրենքով նախատեսված առանձին հայտարարագրման ենթակա տվյալ է:***

Հաշվի առնելով արձանագրված խախտումների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջները, սույն գործով առկա փաստերից հետևում է, որ Աստղիկ Խառատյանը 2020 թվականի տարեկան հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ: Թույլ է տրվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարք:

21

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Հանձնաժողովի՝ 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/08/2021, 2021 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԻՎ/11/2021 որոշումներում նվազ նշանակության են որակվել այն դեպքերը, երբ պաշտոնատար անձի չհայտարարագրած եկամուտը չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը: Էական է գնահատվել նաև այն, որ հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտը ստացվել է մեկ աղբյուրից:

Տվյալ պարագայում Աստղիկ Խառատյանի Հայտարարագրի «Բ.6. Դրամական միջոցները» բաժնի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդներ (բացառությամբ ավանդների)» ենթաբաժնում 01.01.2020 թվականի դրությամբ հայտարարագրման ենթակա է եղել 91,063 (իննսունմեկ հազար վաթսուներեք) ՀՀ դրամ գումարի չափով դրամական միջոցի վերաբերյալ տվյալը, ինչը, որպես չհայտարարագրված տվյալ չի գերազանցել նրա պաշտոնեական դրույքաչափի համար սահմանված աշխատավարձը:

Հանձնաժողովը էական է համարում այն հանգամանքը նաև, որ բանկային հաշիվներում առկա դրամական մնացորդի չափը չի գերազանցել 200 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը: Նշվածով պայմանավորված՝ տվյալ խախտումն ունի նվազ նշանկություն, ինչը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 21-րդ հոդվածի ուժով նշված խախտման կապակցությամբ վարչական պատասխաատվությունից ազատելու և բանավոր դիտողություն հայտարարելու հիմք է հանդիսանում:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի նպատակն է ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Սույն գործով Հանձնաժողովը ուսումնասիրության առարկա է դարձրել նաև հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի տարեկան հայտարարագրի՝ «Շահերի հայտարարարագրում» չներկայացված տվյալները վերջինիս ընտանիքի անդամ Հասմիկ Փափազյանի հնարավոր՝ որպես գույք և (կամ եկամուտ) հայտարարագրված լինելու հետ կապված հարցերը, արդյունքում պարզվել է, որ հայտարարատու

21

պաշտոնատար անձի ընտանիքի անդամը ևս չի հայտարարագրել որևէ տվյալ՝ կապված առևտրային կազմակերպությունում ներկայացուցչություն, մասնակցություն ունենալու և գործադիր մարմնում ներկայացվածության հետ, արդյունքում լիարժեք չի ապահովվել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ կիրառելիս պետք է հաշվի է առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, այլ առկա է Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք (հայտարարտուն ընդունել է հայտարարագրման ենթակա տվյալները հայտարարագրում չներկայացնելու արարքում իր անզգուշությունը և հայտարարագիր ներկայացնելիս այսուհետ առավել ուշադիր կլինի տվյալների հարցում):

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրում անզգուշությամբ ոչ ամբողջական տվյալներ ներկայացնելու համար Աստղիկ Խառատյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200 000 ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աստղիկ Խառատյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Աստղիկ Խառատյանին տրամադրել եռօրյա ժամկետ «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» հայտարարագրի համապատասխան բաժիններում ուղղում կատարելու համար:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2/8